Հաստատված է «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ բաժնետերերի 10.02.2023թ արտահերթ ընդհանուր ժողովի կողմից:

Նոր խմբագրությամբ հաստատված է «Ռոք Կապիտալ» ԲԲԸ գլխավոր տնօրենի 08.05.2026թ.-ի որոշմամբ:

«Ռոք Կապիտալ» ԲԲԸ գլխավոր տնօրեն՝

Ա. Կայֆաջյան

Կ. Տ.

«ՌՈՔ Կապիտալ»

Բաց բաժնետիրական ընկերություն

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

1. Ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման դեպքերը 3
2. Աուդիտի ընդգրկման բնագավառները 3
3. Աուդիտորական կազմակերպության ընտրությունը 4
4. Եզրափակիչ դրույթներ 8
Հավելված 1..... 9

Սույն կարգը մշակված է Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան, և կարգավորում է «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման դեպքերը, ընդգրկման բնագավառները, աուդիտ իրականացնող անձի ընտրության և հաստատման ընթացակարգերը:

1. Ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման դեպքերը

1.1. «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացվում է հետևյալ դեպքերում.

1.1.1. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումից առաջ,

1.1.2. Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների քանակի առնվազն 5 տոկոսին տիրապետող բաժնետերերի պահանջով՝ ցանկացած պահի,

1.1.3. Կենտրոնական բանկի պահանջով՝ ցանկացած պահի,

1.1.4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

2. Աուդիտի ընդգրկման բնագավառները

2.1. Եթե այլ բան սույն կանոնակարգով սահմանված չէ, ապա Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը պետք է առնվազն ընդգրկի հետևյալ բնագավառները.

2.1.1. Հաշվապահական հաշվառում և ֆինանսական հաշվետվությունների կազմում,

2.1.2. Հարկային հաշվառում և հարկային հաշվետվությունների կազմում,

2.1.3. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ներդրումային ընկերության տնտեսական նորմատիվների պահանջներին համապատասխանություն,

2.1.4. Ներքին աուդիտի գործունեության, ներքին հսկողության համակարգի՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանություն,

2.1.5. Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ամբողջականություն և արժանահավատություն,

2.2. Ընկերության ցանկությամբ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը կարող է ընդգրկել նաև հետևյալ բնագավառները.

2.2.1. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում իրականացվող միջոցառումների՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխանություն,

2.2.2. Տեղեկատվական անվտանգության համակարգեր:

2.3. Սույն կանոնակարգի 1.1.2-1.1.4կետերում նշված դեպքերում համապատասխան պահանջը ներկայացրած անձի ցանկությամբ կամ համապատասխան պահանջ սահմանող իրավական ակտով կարող է սահմանվել ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի ընդգրկման բնագավառների ավելի նեղ և/կամ սույն կանոնակարգի 2.1. կետում նշված բնագավառներից տարբերվող շրջանակ:

3. Աուդիտորական կազմակերպության ընտրությունը

3.1. Ընկերությունն իր ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման համար աուդիտորական կազմակերպության ընտրությունն իրականացնում է մրցութի միջոցով:

3.2. Մրցույթի միջոցով ընտրված աուդիտորական կազմակերպությունը պետք է բավարարի հետևյալ չափանիշներին.

3.2.1. Պետք է լինի «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասնագիտացված կառույցի (այսուհետ՝ սույն կանոնակարգում Մասնագիտացված կառույց) անդամ:

3.2.2. Պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում ըստ միջազգային խմբի տարեկան համախառն հասույթի մակարդակի առաջին 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների վրա:

3.2.3. Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է լինի Մասնագիտացված կառույցի անդամ, ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 5 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում և միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորման վկայական (օրինակ՝ էյ-Սի-Սի-էյ, Սի-Այ-էս-էյ):

3.2.4. Աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է լինեն Մասնագիտացված կառույցի անդամ, ունենան աուդիտորական

կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում կամ միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորում (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ):

3.2.5. Աուդիտորական կազմակերպությունը տվել է իր նախնական համաձայնությունը Կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու Ընկերության, աուդիտորական կազմակերպության և կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:

3.2.6. Աուդիտորական կազմակերպությունը տվյալ ֆինանսական տարվան նախորդող 6 տարիներից առնվազն 1-ի համար չի իրականացրել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ:

3.2.7. Նախկինում 6 անընդմեջ տարի Ընկերության աուդիտը իրականացրած լինելու դեպքում այդ վեցամյա ժամկետից հետո անցել է առնվազն 3 տարի:

3.2.8. Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 տարիներից առնվազն մեկի համար չի հանդիսացել «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձ:

3.3. Սույն կանոնակարգի իմաստով աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող անձն է:

3.4. Աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթը հայտարարվում է Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ, որով պետք է սահմանվի նաև աուդիտորական կազմակերպությունների կողմից աուդիտի իրականացման մրցութային առաջարկների ներկայացման ժամկետը, որը չի կարող 45 (քառասունհինգ) աշխատանքային օրվանից երկար լինել:

3.5. Աուդիտորական կազմակերպությունների կողմից աուդիտի իրականացման մրցութային առաջարկների ներկայացման ժամկետի սկիզբը պետք է սահմանվի աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթ հայտարարելու մասին Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի որոշման ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր հետո:

3.6. Աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթ հայտարարելու մասին Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի որոշման պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Մասնագիտացված կառույցի անդամ բոլոր աուդիտորական կազմակերպություններին փոստով կամ էլեկտրոնային փոստով ուղարկվում է մրցույթի անցկացման մասին ծանուցում, որում պետք է նշվեն.

3.6.1. Աուդիտի բնագավառները և այն ժամանակահատվածը, որի ընթացքում ծավալված գործունեության աուդիտը պետք է իրականացվի,

3.6.2. Մրցութային առաջարկների ներկայացման ժամկետը,

3.6.3. Այն փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, որոնք պետք է ներառված լինեն ներկայացվող մրցութային առաջարկում,

3.6.4. Տեղեկացում այն մասին, որ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձը պետք է բավարարի սույն կանոնակարգի 3.2. կետում նշված չափանիշներին,

3.6.5. Այն կապի միջոցները, որոնցով մրցութային առաջարկների կազմման համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար աուդիտորական կազմակերպությունները կարող են կապվել Ընկերության հետ:

3.7. Աուդիտորական կազմակերպությունների կողմից ներկայացվող մրցութային առաջարկներում պետք է առնվազն ներառվեն.

3.7.1. Աուդիտորական կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը և կապի միջոցները,

3.7.2. Տեղեկանք մրցույթի անցկացման տարվան նախորդող 10 (տասը) տարիների ընթացքում կատարված աուդիտորական աշխատանքների մասին՝ նշելով աուդիտի ենթարկված կազմակերպության անվանումը և գործունեության բնագավառը, ինչպես նաև աուդիտորական աշխատանքների կատարման ժամանակահատվածը: Եթե աուդիտորական կազմակերպության ստեղծման պահից դեռևս տասը տարի չի անցել, ապա այդ կազմակերպությունը սույն կետում նշված տեղեկանքը ներկայացնում է իր ստեղծմն պահից մինչև մրցույթի անցկացման տարին ընկած ժամանակահատվածի համար,

3.7.3. Պատասխանատու աուդիտորի և աուդիտորական խմբում ընդրկված այլ աշխատակիցների՝ Մասնագիտացված կառույցի անդամությունը հավաստող փաստաթղթերի պատճենները (առկայության դեպքում),

3.7.4. Պատասխանատու աուդիտորի և աուդիտորական խմբում ընդրկված այլ աշխատակիցների՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորման փաստը հավաստող փաստաթղթերի պատճենները (առկայության դեպքում),

3.7.5. Պատասխանատու աուդիտորի և աուդիտորական խմբում ընդրկված այլ աշխատակիցների միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) վկայականների պատճենները (առկայության դեպքում),

3.7.6. Տեղեկանք պատասխանատու աուդիտորի և աուդիտորական խմբում ընդրկված այլ աշխատակիցների վերջին 10 (տասը) տարվա ընթացքում ունեցած աշխատանքային փորձի վերաբերյալ՝ նշելով համապատասխան կազմակերպությունների անվանումները, գործունեության բնագավառները, այդ կազմակերպությունում տվյալ անձի զբաղեցրած պաշտոնները, կատարած աշխատանքի համառոտ նկարագիրը, ինչպես նաև այն կազմակերպությունների անվանումները և գործունեության բնագավառները, որոնց ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի աշխատանքներին մասնակցել է տվյալ անձը:

3.7.7. Աուդիտորական աշխատանքների կատարման ժամկետը և գինը,

3.7.8. Գրություն այն մասին, որ աուդիտորական կազմակերպությունը չի առարկում, որպեսզի իր և Ընկերության միջև կնքվող պայմանագրում դրույթ լինի այն մասին, որ աուդիտորական կազմակերպությունը համաձայն է Կենտրոնական բանկի հրավերով մասնակցել Ընկերության, աուդիտորական կազմակերպության և կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը,

3.7.9. Պարտավորագիր այն մասին, որ Ընկերության կողմից ընտրվելու դեպքում աուդիտորական կազմակերպությունը պարտավոր է Ընկերության հետ կնքել աուդիտի իրականացման պայմանագիրը՝ մրցութային առաջարկում նշված գնով և պայմաններով:

3.8. Սույն կանոնակարգի 3.7. կետում նշված փաստաթղթերը պետք է ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում) լինեն աուդիտորական կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից,:

3.9. Աուդիտորական կազմակերպությունների մրցութային առաջարկների ներկայացման ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը ներկայացված մրցութային առաջարկների հիման վրա կատարում է աուդիտորական կազմակերպությունների գնահատում::

3.10. Աուդիտորական կազմակերպությունները գնահատվում են ըստ սույն կանոնակարգի հավելված 1-ը կազմող մեթոդաբանության և դրանցից առանձնացվում են առավելագույն գանահատականներ ստացած երեք կազմակերպությունները, որոնք ներկայացվում են Ընկերության բաժնետերերի ժողովի հաստատմանը: Ընդ որում, եթե մրցութային առաջարկներ ներկայացրած կազմակերպությունների թիվը երեքից փոքր է, ապա, բաժնետերերի ժողովի հաստատմանն են ներկայացվում մրցութային առաջարկներ ներկայացրած բոլոր կազմակերպությունները, իսկ եթե գնահատման արդյունքում գնահատականների հավասարության պատճառով հնարավոր չի լինում առանձնացնել երեք կազմակերպություններ, ապա բաժնետերերի ժողովի հաստատմանը ներկայացվող կազմակերպությունների

թիվը մեծացվում է հավասար գնահատական ստացած կազմակերպությունների թվին համապատասխան չափով:

3.11. Սույն կանոնակարգի 3.10. կետի համաձայն առանձնացված կազմակերպություններից բաժնետերերի ժողովը ընտրում է մեկին, որից հետո այդ կազմակերպության հետ կնքվում է աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր՝ մրցութային առաջարկում նշված պայմաններով (ժամկետով և գնով):

3.12. Սույն կանոնակարգի 1.1.2 կետում նշված դեպքում աուդիտորական կազմակերպությունն ընտրվում է համապատասխան բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից՝ պայմանով, որ բավարարված լինեն սույն կանոնակարգի 3.2. կետում նշված պահանջները:

3.13. Սույն կանոնակարգի 1.1.1. կետում նշված դեպքում աուդիտի իրականացման նպատակով աուդիտորական կազմակերպության ընտրությունը պետք է իրականացվի մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա հունվարի 30-ը ներառյալ:

4. Եզրափակիչ դրույթներ

3.14. Սույն կանոնների փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության իրավասու կառավարման մարմնի կողմից և ուժի մեջ են մտնում վերջինիս կողմից սահմանված պահից, իսկ Ընկերության իրավասու կառավարման մարմնի կողմից ուժի մեջ մտնելու պահ սահմանված չլինելու դեպքում՝ հաստատման պահից:

3.15. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում Ընկերության իրավասու կառավարման մարմնի կողմից սահմանված պահից:

Հավելված 1
«ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի Ֆինանսատնտեսական գործունեության
աուդիտն իրականացնող անձի հրավիրման կանոնակարգի

Աուդիտորական կազմակերպությունների գնահատման մեթոդաբանությունը

1. Աուդիտորական կազմակերպության գնահատականը որոշվում է որպես սույն հավելվածի աղյուսակ 1-ում նշված գործակիցների արտադրյալ:
2. Սույն հավելվածի 1-ին կետում նշված գործակիցներին տրվում են հետևյալ գնահատականները

Աղյուսակ 1

Աուդիտորական կազմակերպություններին տրվող գնահատականների սանդղակ

Գործակցի անվանումը	**Գնահատման չափանիշը և տրվող գնահատականը**			
Աուդիտորական կազմակերպության՝ Ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձը ($Գ_1$)	Փորձը փոքր է 5 տարուց	Փորձը մեծ է 5 տարուց սակայն փոքր է 7 տարուց	Փորձը մեծ է 7 տարուց	ըստ միջազգային խմբի տարեկան համախառն հասույթի մակարդակի առաջին 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպություն է
	0	1	2	3

Գործակցի անվանումը	**Գնահատման չափանիշը և տրվող գնահատականը**			
Պատասխանատու աուդիտորի՝ ֆինանսական կազմակերպությունների աուդիտի փորձը ($Գ_2$)	Փորձը փոքր է 3 տարուց	Փորձը մեծ է 3 տարուց սակայն փոքր է 5 տարուց	Փորձը մեծ է 5 տարուց սակայն փոքր է 7 տարուց	Փորձը մեծ է 7 տարուց
	0	1	2	3
Պատասխանատու աուդիտորի կողից աուդիտի ենթարկված կազմակերպությունների թիվը ($Գ_3$)	Փոքր է 5-ից		Մեծ է 5-ից	
	0		1	
Պատասխանատու աուդիտորի որակավորումը ($Գ_4$)	Չունի Մասնագիտացված կազմակերպության կողմից տրված և միջազգային որակավորում		Ունի Մասնագիտացված կազմակերպության կողմից տրված և միջազգային որակավորում	
	0		1	
Աուդիտորական խմբի առկայությունը ($Գ_5$)	Առկա չէ		Առկա է	
	1		2	
Աուդիտորական խմբի՝ սույն կանոնակարգի 3.2.4. կետում նշված պահանջներին բավարարող անդամների թիվը ($Գ_6$)	Փոքր է անդամների ընդհանուր թվի կեսից	Մեծ է անդամների ընդհանուր թվի կեսից, սակայն փոքր է 2/3-ից	Մեծ է անդամների ընդհանուր թվի 2/3-ից, սակայն փոքր է 3/4-ից	Մեծ է անդամների ընդհանուր թվի 3/4-ից
	0	1	2	3
Սույն կանոնակարգի 3.2.6-3.2.8 կետերին համապատասխանությունը ($Գ_7$)	Չի համապատասխանում		Համապատասխանում է	
	0		1	
Մրցութային առաջարկում նշված գինը ($Գ_8$)	$Գ_8 = \frac{R}{r}$, որտեղ R-ը բոլոր աուդիտորական կազմակերպությունների կողմից առաջարկված գների հանրագումարն է, իսկ r-ը՝ տվյալ աուդիտորական կազմակերպության կողմից առաջարկված գինը:			